մեր նպատակին յարմար և համաձայն գտնալով համառօտելով կը դնեմք աստ։ [1] «Գիտնոց մեծագոյն մասը, որք զբաղած են խընդրովս թէ՝ երբ արդեօք բնակութիւն հաստատել են Հայք Ղրիմու մէջ, ընդունած են ընդհանրապէս, Սեսթրենցեւիչի կարծիքը, հանեալ ի յիշատակարանաց, յետ մահուն, Երկայնաբազուկ Աղուութեանց իշխան արքեպիսկոպոսի։ Այդ յիշատակարանաց համեմատ, Թաթարք՝ նուաճելով զՀայաստան 1262 ին, երկրին բնակչաց մեծագոյն մասը տարել բնակեցուցել են այժմեան Ղազանի Աժտերխանու գաւառաց մէջ, ուսկից նոքա անցել են ի Ղրիմ 1341 ին համաձայնութեամբ Գենուացւոց, ի Կաֆա և ի մերձակայս Սուտաղի»։

Առանց մերժելու, որ շատ Հայեր կարող եղած են անցնել ի Ռուսաստան, աշխարհին Մոնգոլաց լուծին տակ ընկնալէն վերջ, որք ապա կտրելով անցնելով անապատները եկել են բնակութիւն հաստատելու Ղրիմու քաղաքաց մէջ։ Մ. Իւրգեւիչ յայտնի կը բացատրէ որ՝ Հայոց գաղթականութիւնք եղած են այլեայլ ճանապարհներով, և արքեպիսկոպոսին ցուցուցած թուականէն շատ առաջ, այնպէս որ մեզի ուրիշ բան չինկնար, բայց եթէ հետեւիլ գիտնական հետազօտութեանց պատուական պրոֆեսսորին. վասն զի սերտ կապ ունին նորա զրոյցքը խնդրոյս հետ որով այժմ զբաղիմք։

Անդատին ի ԺԱ. դարէ, տարաբաղդ ժողովուրդք Հայաստանի, որ մասամբ ընկճեալ էին ի Քրդաց,

1. "Քանոթութիւնք պատմականք և տեղագրականք խուսլացի գաղթականութեանց յաշխարհի Կաղարաց». Պետրբուրգ 1866։